

ՀԱՅ ԳԻՐՔԸ ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐՈՒՄ. ԱՆՅՅԱԼՈՒՄ ԵՎ ԱՅՍՕՐ

Աննա-Մարիա Մատտաար

Գրական թարգմանչուհի, Հոլլանդիա

Քանի որ վերը նշված թեման բավականաչափ ծավալուն է, ուստի կանդրադառնամ միայն թեմային առնչվող քիչ հայտնի դեպքերի և նոր տեղեկությունների:

Նիդերլանդներում (կամ՝ Հոլլանդիայում) գտնվող հայերի և նրանց գրքերի մասին խոսելիս չեմ կարող չնշել մի հայի, որ դեռ չորրորդ դարում Հայաստանից ճանափարհորդեց Նիդերլանդներ՝ իր հետ տանելով մի գիրք: Նա այնտեղ հայտնի դարձավ Սերվաաս կամ Սերվացիուս անունով և, չնայած որ նրա գիրքը – բնականաբար, քանի որ Մաշտոցից առաջ էր – հայերեն լեզվով գրված չէր, բայց շատ մեծ նշանակություն ունեցավ հոլանդացիների համար՝ Սերվացիուսը նրանց ներկայացրեց Սուրբ Գիրքը: Նա քրիստոնեությունն էր քարոզում հեթանոսական Նիդերլանդներում և դարձավ Մասստրիխտ քաղաքի առաջին եպիսկոպոսը, իսկ հետագայում նաև՝ Նիդերլանդների առաջին սուրբը:

Սերվացիուսից հետո հարյուրավոր տարիներ Նիդերլանդներում ոչ մի գրանցում չկա հայերի կամ հայկական գրքի առկայության մասին:

17-րդ դարի սկզբներին Հոլլանդիայում հաստատվեցին առաջին հայերը: 1623թ. հոլանդական շատ հզոր «Արևելահնդկական» ընկերությունը Իսթահանում, կամ Նոր Ջուդայում առևտրական տուն բացեց՝ հայերի ձեռքում գտնվող մետաքսի առևտրից օգուտ քաղելու նպատակով: Հոլանդացիների հետ հայ վաճառականները հասան Ամստերդամ և նրանց մի մասը հիմնական բնակություն հաստատեց այնտեղ:

Այդ նույն ժամանակաշրջանում Լեյդեն քաղաքում տաղանդավոր մի երիտասարդ էր ապրում՝ հոլանդացի նշանավոր գիտնական՝ աստվածաբան, լեզվաբան, պատմաբան և հումանիստ Գերարդուս Յոհաննես Վոսսիուսի (1577-1649թթ.) որդի Դիոնիսիուսը: 1612թ. ծնված Դիոնիսիուսը հայերենն էր ուսումնասիրում: Հայտնի չէ՝ ունեցել է ուսուցիչ, թե ինքնու է եղել, բայց փաստ է, որ Ամստերդամի համալսարանի ձեռագրերի և հնատիպ գրքերի բաժնում պահվում է մի տետրակ, որի մեջ Դիոնիսիուսը անվարժ ձեռքով Նոր Կտակարանից հայերեն տողեր և առանձին բառեր է արտագրել՝ դրանք համեմատելով լատիներեն համապատասխան տողերի և բառերի հետ: Վոսսիուսների ընտանեկան գրադարանը ընդգրկում է բազմաթիվ հայերեն ձեռագրեր, որոնք այժմ պահվում են Օքսֆորդի համալսարանի Բոդլեյան գրադարանում: Դրանց մեջ գուցե գտնվի նաև այն Նոր Կտակարանը, որը Դիոնիսիուսին ծառայել է որպես բնագիր: Ցավոք Դիոնիսիուսը մահացել է ընդամենը 21 տարեկան հասակում, ինչի պատճառով չի հասցրել լիովին տիրապետել հայերենին և կամ հոլանդերեն թարգմանել ընտանիքում պահվող հայերեն ձեռագրերը:

Տասնյոթերորդ դարում բողոքականություն դավանող հոլանդացիները բավականին հանդուրժող էին այլ կրոնների հանդեպ, ինչը չէր կարելի ասել նույն ժամանակի Հռոմի և

Իտալիայի մասին: Դա է պատճառը, որ Հակոբ Զուղայեցի Կաթողիկոսի կողմից Եվրոպա գործուղված Մատթեոս Ծաբեցին տպարան հիմնելու նպատակով 1658թ. հաստատվում է ոչ թե Վենետիկում, ուր 1512թ. տպագրվել էին առաջին հայերեն գրքերը, այլ Ամստերդամում: 1660-1717թթ. միջև ընկած ժամանակահատվածում Ամստերդամում լույս է տեսնում ավելի քան 50 անուն հայատառ տպագրված գիրք, ինչից հետո հայկական գրքերի տպագրությունը դադարում է այդ քաղաքում: Քանի որ Ամստերդամի հայկական տպարանների և հայերեն լեզվով առաջին տպագիր Աստվածաշնչի պատմությունը բավականաչափ ուսումնասիրված է, այդ մասին արդեն շատ է գրվել և խոսվել, դրան հիմա չեմ անդրադառնա: Քչերը գիտեն, սակայն, այն ջանքերի մասին, որ գործադրվեցին 1755թ. Ամստերդամում նոր հայկական տպարան հիմնելու համար: Նորջուղայեցի առևտրական Առաքել Պողոսյանը Ամստերդամի հայկական եկեղեցու քահանայի հետ միասին ձեռնամուխ եղան նոր տպարան ստեղծելու գործին: Քահանա Հովհաննես Ամասիացին նախատեսված տպարանի համար պատրաստեց բազմաթիվ նյութեր, այդ թվում՝ լատիներենից հայերեն թարգմանելով Հովհաննես Բոնա կարդինալի «Աղոթագիրքը» և հոլանդացի փիլիսոփա Ֆրանկո Բուրգերսդեյկի «Տրամաբանությունը»: «Աղոթագրքի» ձեռագիրն այժմ պահվում է Երևանի Մատենադարանում, իսկ «Տրամաբանության» ձեռագիրը՝ Ամստերդամի համալսարանի Հատուկ Հավաքածուներում: Երկու ձեռագրերն էլ, հավանաբար, Հովհաննես Ամասիացին ինքն է իր ձեռքով գրել՝ սև և կարմիր թանաքով, շատ գեղեցիկ և համաչափ ձեռագրով: Պարզորեն երևում է, որ այս գրությունները տպարանի գրաշարներին բնօրինակ ծառայելուն են նախատեսված եղել:

Առաքել Պողոսյանը հայտնի փորագրիչ Յոհան Միխայել Ֆլայշմանին պատվիրեց հայկական տպատառեր պատրաստել: Պողոսյանի և Ֆլայշմանի միջև կնքված պայմանագիրը, ինչպես նաև Ֆլայշմանի փորագիր տպատառերը՝ հայր և մայր տառերն ու ձուլված տպատառերը, մինչ օրս պահվում են Հաարլեմ քաղաքի Էնսխեդե թանգարանում: Այնտեղ է պահվում նաև Ֆլայշմանի տառերով տպագրված միակ էջը (հայտնի չէ քանի օրինակով է տպվել)՝ Առաքել Պողոսյանի չափածո հայցագիրը՝ ուղղված հայ համայնքին, որով նա խնդրում է նվիրել այնպիսի գրքեր, որոնք բնօրինակներ կծառայեն նորաստեղծ տպարանի համար: Յուրաքանչյուր գրքի դիմաց Պողոսյանը նվիրողին տպագրված տասը գիրք է խոստանում: Հայցագիրը տպագրվել է 1756թ. մայիսի 15-ին:

Ցավոք, Ամստերդամի նոր հայկական տպարանը ոչ այդ ժամանակ և ոչ էլ հետագայում իրականություն չդարձավ:

Տասնիններորդ դարի կեսերին Հոլանդիայում համարյա թե հայեր չէին մնացել: Եվ միայն քսաներորդ դարի կեսերին նոր հայեր են բնակություն հաստատում Նիդերլանդներում: Այսօրվա դրությամբ շուրջ տաս հազար հայ է բնակվում այդ երկրում: Տարբեր քաղաքներում հայկական միություններ կան, և դրանց մի մասն իր հայալեզու գրադարանն ունի: Այդ գրադարանները, սակայն, լուրջ (և ոչ միայն ֆինանսական) խնդիրների առաջ են կանգնած: Հաճախ դրանք գոյատևում են մեկ մարդու ջանքերով: Դեպքեր են եղել, որ հայկական միությունները դադարել են իրենց գործունեությունը, իսկ միության գրադարանի գրքերը ինչ-որ տեղ պահվել և մոռացության են մատնվել:

Չնայած որ Ամստերդամի համալսարանի «Հատուկ հավաքածուներում» պահվում է նաև հայալեզու հավաքածու, սակայն այն համալսարանում հայագիտական բաժին չկա, ինչի պատճառով հավաքածույում առկա գրքերն ու ձեռագրերը մինչ օրս բավականաչափ

ուսումնասիրված չեն: Այսպիսով, Դիոնիսիոս Վոսիոսի վերը նշված տետրը բոլորովին վերջերս ենք հայտնաբերել և հարկ եղած չափով ուսումնասիրված չէ: Առանձին երախտագիտությամբ է պետք հիշել մեծահամբավ հայագետ և լեզվաբան պրոֆեսոր Վեյտենբերգի՝ իր կյանքի ընթացքում հայագիտական նյութերի հարուստ գրադարան հավաքելու ջանքերը: Վեյտենբերգի մահից հետո հավաքածուի համար փնտրվել է նոր պահոց՝ նրա աշխատանքը շարունակական դարձնելու մտահոգությամբ: Այդպիսի տեղ Նիդերլանդներում, ավադ, չգտնվեց, ի վերջո որոշվեց հավաքածուն տեղափոխել Անգլիա՝ Բոդլեյան գրադարան: Այս կերպ, ահա, զգալիորեն թուլացան Նիդերլանդների հայագիտության առանց այդ էլ անկայուն դիրքերը:

Հաշվի առնելով այս ամենը, հայագիտության համար նպաստավոր պայմաններ ստեղծելու մտահոգությամբ, ձեռնամուխ ենք եղել Ամստերդամի հայկական եկեղեցուն կից նոր հայկական մշակութային կենտրոնի և գրադարանի հիմնադրմանը: Անկասկած հայկական եկեղեցին, որ այս տարի պատրաստվում է նշել իր 300-ամյակը, երկար կշարունակի իր գոյությունն ու գործունեությունը ոչ միայն Նիդերլանդների հայ համայնքի, այլև հայոց պատմությամբ և մշակույթով հետաքրքրված հոլանդացիների շրջանակներում: Սա կապահովի նաև հայկական մշակութային կենտրոնի շարունակականությունը: Նոր ստեղծվող գրադարանում ընդգրկված կլինի և՛ հայ գրականությունը և՛ հայագիտությանը վերաբերող նյութեր թե՛ հայերեն, թե՛ հոլանդերեն և թե՛ եվրոպական այլ լեզուներով: